

ՈՐՈՇՈՒՄ

ԵԹԿՊԻ-ի գիտական խորհրդի 2016թ. հոկտեմբերի 31-ի

նիստի /արձ. 2/

1. Հիմք ընդունելով 2015-2016 ուս. տարում աշխատանքային և հետազոտողի կրթական ծրագրի ուսումնական պլաններով նախատեսված աշխատանքների կատարման արդյունքները՝

1.1. ԺԷ.00.01 «Թատերական արվեստ, կինոարվեստ, հեռուստատեսություն» մասնագիտության հեռակա ուսուցման I կուրսի ասպիրանտ Անի Լիպարիտի Տեր-Հովհաննիսյանին ատեստավորել և փոխադրել ուսումնառության II կուրս,

1.2. ԺԷ.00.01 «Թատերական արվեստ, կինոարվեստ, հեռուստատեսություն» մասնագիտության հեռակա ուսուցման II կուրսի ասպիրանտ Արթուր Տիգրանի Վարդիկյանին ատեստավորել և փոխադրել ուսումնառության III կուրս:

2. Հաստատել և գործողության մեջ դնել «ԵԹԿՊԻ-ի դասալսումների անցկացման և քննարկման կանոնակարգ»-ը:

3. Հաստատել Արվեստի պատմության, տեսության և կառավարման ֆակուլտետի կանոնադրությունում ֆակուլտետի խորհրդի կողմից առաջարկված մասնակի փոփոխությունը և սույն կանոնադրության 4.1 կետը շարադրել հետևյալ բովանդակությամբ. «4.1 ֆակուլտետը ԵԹԿՊԻ-ի ուսումնական, գիտական և վարչական ստորաբաժանումն է, որն իրականացնում է բարձրագույն մասնագիտական կրթություն՝ առկա ուսուցման ձևով բակալավրի և մագիստրոսի կրթական ծրագրերով.

ա/ 2016-2017 ուս. տարվա ընդունելությունից սկսած՝ բակալավրի կրթական ծրագրով՝ մեկ մասնագիտությամբ, մագիստրոսի կրթական ծրագրով՝ վեց մասնագիտությամբ,

բ/ 2015-2016 և նախորդ ուսումնական տարիներին ընդունվածների համար՝ բակալավրի կրթական ծրագրով չորս մասնագիտությամբ, մագիստրոսի կրթական ծրագրով՝ տասը մասնագիտությամբ»:

3.1. Ուժը կորցրած ճանաչել կանոնադրության 8.3 և 11 կետերը:

3.2. Հանձնարարել պրոռեկտոր Վ. Եղիազարյանին ֆակուլտետների ղեկանների համար պատվիրել համապատասխան դրոշմակնիքներ:

4. ԵԹԿՊԻ-ի ուսանողական խորհրդի կանոնադրության ներկայացված տարբերակն ընդունել որպես հիմք և այն խմբագրելու նպատակով ստեղծել խմբագրական հանձնախումբ հետևյալ կազմով՝

- Իսրայելյան Հասմիկ- ՈԱԿ-ի ղեկավար
- Մանասերյան Էլեն –իրավախորհրդատու
- Սարգսյան Արմեն- ուս. խորհրդի նախագահ
- Ահարոնյան Անի – ուս. խորհրդի անդամ

5. Գիտաժողովի կազմակերպման նախապատրաստական աշխատանքների ընթացքը համարել բավարար:

6. Արձանագրել, որ պրոֆեսորի գիտական կոչում շնորհելու նպատակով կազմակերպված փակ, գաղտնի քվեարկությունն ընթացել է սահմանված կարգով և ընթացակարգի խախտումներ չեն գրանցվել,

6.1. հաստատել փակ, գաղտնի քվեարկության արդյունքները և հաշվիչ հանձնաժողովի արձանագրությունները,

6.2. փակ, գաղտնի քվեարկության արդյունքների հիման վրա ՀՀ գիտամանկավարժական կադրերին պրոֆեսորի և դոցենտի գիտական կոչումներ շնորհելու կարգի 6-րդ կետի գ) ենթակետի համաձայն ձայների մեծամասնությամբ (27 կողմ, 2 դեմ, 1 անվավեր) պրոֆեսորի գիտական կոչում շնորհել դոցենտ Գայանե Ռուբենի Մարտիրոսյանին ԺԷ.00.01 «Թատերական արվեստ, կինոարվեստ, հեռուստատեսություն» մասնագիտությամբ և խնդրել ՀՀ ԲՈՀ-ին հաստատել գիտական խորհրդի որոշումը,

6.3. . փակ, գաղտնի քվեարկության արդյունքների հիման վրա ՀՀ գիտամանկավարժական կադրերին պրոֆեսորի և դոցենտի գիտական կոչումներ շնորհելու կարգի 6-րդ կետի գ) ենթակետի համաձայն ձայների մեծամասնությամբ (29 կողմ, 1 դեմ) պրոֆեսորի գիտական կոչում շնորհել դոցենտ Գեորգի Ստեփանի Կևորկովին ԺԷ.00.01 «Թատերական արվեստ, կինոարվեստ, հեռուստատեսություն» մասնագիտությամբ և խնդրել ՀՀ ԲՈՀ-ին հաստատել գիտական խորհրդի որոշումը:

7. Հանձնարարել ֆակուլտետների ղեկաններին առաջին կիսամյակում անցկացվող միջանկյալ ստուգումները ստուգարքով ավարտելու հարցը քննարկել ինստիտուտի մեթոդխորհրդում:

Գիտքարտուղար

Գ. Հովհաննիսյան